նոցաւ Անուասիկ ցուցակը. Ս. Ավճեան 5 ր., Մ. Ալխազեան 3 ր., Ալեկով 1 ր., Ա. Լեվիչ (հրէայ) 1 ր., Կ. Կաոլօնայ (յոյն) 1 ր., Պավլիկ 1 ր.. Լէյպման (հրէայ) 1 ր., Անյայտ ոմն 3 ր., Գ. Տէր-Օվակիմեան 3 ր., Ֆ. Կաճառավայ (վրացի) ր., Լ. Հասան-Ջալալեան 50 կ., Ոմն 50 կ., Ս. Քոխլիատի (յոյն) 2 ր., Տ. Վանցեան 3 ր., Հ. Д....онъ Սաբար-օղլի (Թիւրք) 1 րուբլ, Մուստ. Արիֆն-օղլի (Թիւրք) 1 ր., Մ. Շահոյեանց 60 կ., Պլիւմպերկ (հրէայ) 1 ր., Քէօմիւրճեան 3 ր. 40 կ.. Ընդամենը 33 ր.. փոստի ծախքը ես վճարած եմ։

Ա. Քէօմիւրճեան

ՆԱՄԱԿ ԿՐԱՍՆՕՎՕԴՍԿԻՑ

25 նոյեմբերի

Կարդալով ձեր պատուական լրագրի մէջ թչուառ ազգայնոցս ներկայ դրութիւնն, մեր Կրասնօվօդսկու փոքրիկ խումբի մէջ յղացուցի մի բարի միտք իբր օգնել հայ եղբարցս։

Վստահորոյ կը խնդրեմ ընդունիլ փոքրիկ նուէրքս և հասուցանել բարեհաճէք ուր հարկն է, և ի միամտութիւն նուիրողաց տպագրել անունները։

Շուշեցի Ա. Աւագեանց 5 ր., Գ. Տէր-Պետրոսեանց 5 ր., Ս. Նասիբեանց 5 ր., Ա. Թէոնեանց 5 ր., Ի. Յ. Շահունցեանց 5 ր., Ա. Արամեանց 3 ր., Ի. Շահինեանց 3 ր., Մ. Յարութիւնեանց 3 ր., Տէր-Եղիազարեան 3 ր., Կ. Պարունեանց 2 ր., Ն. Քոչարեանց 2 ր., Յ. Բաթալեանց 2 ր., Վ. Գաւիթեանց 2 ր., Կ. Ասրիեանց 2 ր., Յ. Աւետիսեանց 1 ր. 50 կ., Պ. Ղահրամանեանց 1ր. 50 կ., Մ. Արտէմեանց 1 ր., Յ. Բաբայեանց 1 ր., Ե. Յովհաննէսեանց 1 ր., Կ. Յարութիւնեանց 1 ր., Յ Բարզամեանց 1 ր., Ա. Օհանեանց 1 ր., Թ. Էլլիբէկեանց 1 ր., Մ. Բալայեանց 1 ր., Ա. Սարուխանեանց 1 ր., Շ. Բաղիրեանց 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Ե. Ղուլիեանց 1 ր., Ե. Տէր-Յարութիւնեանց 1., Ս. Տէր-Յարութիւնեանց 1 ր., Մ. Տէր-Յովհաննէսեանց 1 ր., Մ. Վարդանեանց 1 ր., Ա. Ղազիեանց 1ր., Ա. Ֆարհանեանց 50 կ., Ն Բաղդասարեանց 50 կ.. Շամախեցիք. Մ. Մայիլեանց 5 ր., Ա. Տէր-Գասպարեանց 2 ր., Կ. Թառայեանց 2 ր., Գ. Վարդանեանց 2 ր-, Կ. Դոնղարեանց 1 ր., Մ. Լալայեանց 1 ր., Թ. Ասլանեանց 20 կ. Թիֆլիսեցիք. Մ. Դախտուլեանց 6 ր., Գ. Տէր-Սահակեանց 3 ր., Գ. Առաքելեանց 1 ր., Ա. Անդրէեանց 1. ր., Կ. Բախտաջէ 1 ր., Կ. Յակոբեանց 1 ր., Ա. Չէռէլջէ 30 կ.. Նուխեցիք. Գ. Դիլլարեանց 2 ր., Մ. Մուշեղեանց 1 ր.. Աստրախանցի. Յ. Ալէքսանդրեանց 2 ր., Գ. Բաբայեաց 1 ր., Եկոր Կարսայեանց յոյն 3 ր., Ոմն 20 կ.. Գումարն է 102 ր., 70 կ.. Եօթանասուն կօպէկ փոստի ծախք վեր առնելով, մնացեալ գումարն է հարիւր և երկու մանէթ.

Ա. Աւագեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 3-ին

«Մեղու» լրագիրը սեպտեմբեր ամսում իմ անունով մի կեղծ նամակ հրատարակելով իր երկարաբան նախերգանքի մէջ փափաք էր յայտնում Ամիրխանեանցի ուրիշ նամակներն էլ տպել, և խնդրում էր, ում մօտ որ նորանցից գտնվի իրան ուղարկել տպելու։ Մինչև ցարդ «Մեղուն» էլ մենք էլ, զուր սպասեցինք նոմէրաւոր նամակների տպվելուն։ Երևում է, որ դատաստանի ձայնը երկնից պատճառեց։

Բայց ինչ և իցէ. հիմա Հայկակ ոմն Լուսինեան հանդէս է դուրս եկել և հրապարակով պարծենում է, թէ «իր մօտ ապահովութիւն են վայելում» Ամիրխանեանցի նամակներից շատերը։ «Պսակն» ասում է, թէ այդ անձը առաջ աւետարանական էր և հիմա լուսաւորչական է եղել. ուրեմն շատ էլ հաւանական է, որ Ամիրխանեանցի նամակներն ունենայ։

Ես Ամիրխանեանցս կարող եմ վստահաբար ասել, որ իմ գրած նամակներս լոյսից չեն փախենայ—և երբ էլ որ հրատարակվեն՝ կարող են ինձ միմիայն շահաւէտ լինել։ Եթէ այսպէս չը լինէր, Լուսինեանն այսքան ժամանակ նրանց իր գզրոցում չէր բանտարկի. և հիմա էլ ասում եմ, եթէ այսպէս չէ, նա քաջութիւն կունենայ իմ գրած նամակների իսկականը—և ոչ թէ ինքնահնար պատճէնը—«Մեղու» լրագրին տալ հրատարակելու։ Էլ ո՞ր օրի համար էք պահում. հանեցէք, բոլոր աշխարհքը տեսնէ։ Բայց ես գիտեմ, որ նախ Լուսինեանը չի տայ իմ նամակները, և երկրորդ, եթէ նա տայ էլ՝ «Մեղուն» չի տպի։

Ա. Ամիրխանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 7 դեկտեմբերի

Ներկայ ուսումնական տարուայ սկզբում մեր Մասնաւոր ուսումնարանից ընդունվեցին աշակերտներ քաղաքիս միջնակարգ զանազան ուսումնարաններում։ Կլասիքական գիմնազիոնի առաջին դասատան մէջ ընդունվել են չորս աշակերտ։ Նոյն գիմնազիոնի առաջին պատրաստականի մէջ—հինգ։ Բէալական ուսումնարանի առաջին դասատան մէջ—երկու։ Մասնաւոր բէալական ուսումնարանի երկրորդ դասատան մէջ—մէկը։ Տէխնիքական ուսումնարանի առաջին պատրաստականի մէջ—երկու։ Ներսիսեան դպրոցի առաջին դասատան մէջ—մէկը։ Արհեստաւորաց ուսումնարանի առաջին դասատան մէջ—երեքը։ Ընդամենը քսան և երկու պատրաստուած աշակերտ տուել է մեր ուսումնարանը։

Յարգոյ խմբագիր, խնդրեմ այս հաշիւը տպագրէք ձեր լրագրում ի գիտութիւն հասարակութեան։

Կ. Բէլախեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 1 դեկտեմբերի

Չերնօգորցիները, ալբանեացիները, սերբիացիները, բուլղարները, ռումինիացիները, յոյները, վերջապէս սրանց նման երկրորդական անկախ ազգութիւնները Կ.Պօլսոյ կառավարութեան աչքը այնքան չը կարողացան վախեցնել, որքան վերջին ժամանակներս հայը սարսափեցուց։ Այժմ յուսահատեալ տաճիկի գիշերը երազին մէջ ահ ու սարսափով երևցած բանը հայն է, Վոսփորի բատիշահին ինչ բան ցոյց տաս չի վախենար, մինչև անգամ Էջմիածնայ խոշոր վեղարով սարսափելի կաթողիկոսը ցոյց տուր, չես կարող վախցնել, բաւական է որ սև և սրածայր վեղարով Ներսէս պատրիարքին տեսնէ, վախէն լեղին կը պատռի։ Ներսէս պատրիարքին անշուշտ կախարդ կը կարծեն, որովհետև քանիցս անգամ թունաւորել ուզեցին, չը մեռաւ, հրաժարել պաշտօնէդ, Կ. Պօլսից դուրս ել ասացին, նա ոչ լսեց, ոչ գնաց. Խրիմեանը Վանայ մէջ ապստամբութեան պարագլուխն է, յետ կանչէ, ասացին, Ներսէս պատրիարքը պատասխանեց թէ՝ ես չեմ խառնվիր, Էջմիածին ինձանից մեծ կաթողիկոս կայ, Խրիմեանը նրանից պահանջեցէք. Հայաստանի մէջ ապստամբներ երևան ելեր են, նրանց ինչու չէք զսպել՝ ասացին, պատրիարքը պատասխանեց թէ հիմայ ժամանակը ուշ է, առաջ խելքներդ ուր էր. վերջ ի վերջոյ այս համարձակ և անվախ պատասխաններէն Մուհամմէդի հետևողների հայերից ունեցած վախը այնքան սաստկացել է, որ 22 նոյեմբեր թուականով Կ. Պօլսէն ինձ հասած մի նամակի բովանդակութեանը նայելով, այս օրերս այս վախը մինչև նախապաշարմունքի հասել է, և հետևաբար նախանձելի հետևանքներ չէ ունեցել։ Նախապաշարեալ կառավարութիւնը հրամայել է, որ լաւ խուզութիւն անեն հայերուն, հարէմներու մէջ փլաւ և խօշաբ ուտելով ուղեղնին ջուր կտրած թիւրք դիպլոմաթներն էլ խոյոն գործելու սկսել են։ Նախ և առաջ ծխախոտի մի գործատուն՝ որուն տէրը հայ է եղել, ոստիկանութեան կողմանէ բռնութեամբ փակվել և մէջ գտնված ծխախոտները յետ գրաւելով՝ գործատան տէրը բանտարկվել է, որուն վճիռը պիտի լինի եղեր աքսոր կամ տաժանակիր աշխատութեանց դատապարտութիւն. պատճառը՝ որովհետև ծխախոտը մէջը շրրելու համար պատրաստված թղթաչէն տուփերուն վրա հայկայ պատկերներ կան եղել, նմանապէս պահարաններուն վրա «Մայր Հայաստան» գրված բաբիրոսի թուղթ ծախողներուն ամենքն էլ բանտարկվել են, սրճարաններուն մէջ ըստ վաղեմի սովորութեան պատերէն կախված «բարեբարք Հայաստանեայց» պատկերները ջարդել կտոր կտոր են արել, սպառնալով միանգամայն որ միւս անգամ եթէ յանդգնին, այսպէս իրենց գլուխն էլ պիտի ջախջախեն։ Մի բան մոռացել են, այն է, նորածին հայ երեխայներուն հայու անուններ տալը արգելել, օրինակ, փոխանակ Արամ, Երուանդ, Արտաշէս, Տիգրան և այլն անուանելու, հայ մանկտոյ Մուստաֆայ, Հասան, Հիւսէյին, Օսման անուններով մկրտել։

Աֆերիմ, հանճարեղ դիպլոմաթ Հաճի Մէհմէտ աղաներ, ինչ նուրբ և հեռատես քաղաքականութիւն. խեղճերը չը գիտեն որ այս բարբարոսութիւնը առաւել նպաստաւոր է հայկական խնդրոյն քան թէ վնասակար։ Ո՞ գիտէ սերային որ Այիշէ կամ Ֆաթիմէ խանումին թելադրութեամբը այս բարբարոսութիւնը կատարվել է. որովհետև սոքա ևս երբեմն մեծ դեր կը խաղան դիպլոմատութեան մէջ, երևակայեցէք որ շատ անգամ մի կնճռոտ հարցի վճիռը՝ սերային մէջ առաջնակարգ մի խանումին շրթունքներէն քաղուած վավաշոտ համբոյրից կախում ունի......

Դաւիթ մարգարէն ասել է «Երանեալ է այր որ ոչ գնաց 'ի կորուստս ամբարշտաց և յաթոռս ժանտից ոչ նստաւ», ես մարգարէ չեմ, բայց իրաւունք ունեմ ասելու «Երանեալ է հայ որ ոչ գնաց 'ի մայրաքաղաքն Մահմետականաց, և 'ի գահն սուլթանին նա ոչ նստաւ»։ Այսպիսի մի քաղաքի մէջ ուր ամենայն բոպէ մահու և կենաց խնդիրը կայ, արդարև հազար փառք ու պարծանք է ազգին համար Ներսէսի նման հաստատամիտ, անձնանուէր և անվեհեր գործող մի պատրիարք ունենալը։ Թող ուրիշները օրինակ առնուն։ Սա ևս տեղեկութիւն գրված է Կ. Պօլսից որ սրբազան Պատրիարքը իր անձին ապահովութեանը համար իւր բնակած տանը դրանը առաջը ոտից մինչև գլուխը զինեալ երկու հսկայ պահապաններ է կանգնեցրել։

Կ ը ա օ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պօլսից ստացված են հետևեալ տեղեկութիւնները դեկտեմբերի 6-ից։ Մի տեսակ զանազանութիւն կայ ռուս լրագիրների հայեացքների մէջ յունական խնդրի վրա և այն երկիւղի մէջ, որ կրում է Բ. Դուռը ռուս-անգլիական դաշնադրութեան մասին։ „Վակիթ" լրագիրը ուրախութեամբ յայտնում է, որ ռուսաց լրագիրներից գլխաւորները Յունաստանին խորհուրդ են տալիս զգոյշ լինել, իսկ թիւրքաց մինիստրները սարսափով մտածում են ռուս-անգլիական դաշնադրութեան հաւանականութեան մասին։ Մինիստրների ասածների համեմատ Բ. Դուռը հաւատացած է, որ Գերմանիա, Աւստրիա և մինչև անգամ Ֆրանսիա թիւրքիային ձեռնտու. չէզոքութիւն կը պահեն յունական խնդրի վերաբերութեամբ։ Եթէ գործը սուլթանից կախված լինէր և նա ունենար անհրաժեշտ դրամական միջոցներ, նա անյապաղ կը յարձակվէր Յունաստանի վրա, աւելի շուտ քան թէ այս վերջինը դաշնակիցներ կը գտնէր։ Սուլթանի խորհրդատուները այն կարծիքի են, որ նա շուտով պէտք է հարուած հասցնի Յունաստանին, բայց Աբդուլ-Համիդ տատանվում է, երկիւղ կրելով, որ պատերազմը կարող է արիւնհեղ և երկարատև լինել։ Պատերազմի երկարելը միակ բանն է, որ յետ է պահում սուլթանին։

Պ. Գօշէն այս շաբաթ ուղևորվում է Անգլիա, որպէս զի յայտնէ Գլադստոնին իր կարծիքները յունական, հայկական և ֆինանսական խնդիրների մասին, որոնք նրա փորձառութեան հետևանքներ են։ Այդ կարծիքները յայտնելուց յետոյ նա կը վերադառնայ Կ. Պօլիս և կը մնայ այստեղ այնքան ժամանակ, որքան հարկաւոր կը լինի այդ հարցերը այնպէս վճռելու համար, ինչպէս կը կարգադրէ անգլիական կառավարութիւնը։ Այս հանգամանքը ապացուցանում է թիւրքերին, որ Գլադստօն վճռել է հետևել իր նախկին քաղաքական նախագծին։ Նրան ընդդիմադրելու համար թիւրքիան իշխան Բիսմարկի գիրկն է ընկել, բայց այդ էլ նրան չի ազատի։

Ակներև է, որ եթէ գարնանը Գամբետտա Ֆրանսիական կառավարութեան գլուխը կանգնի, քաղաքական գործերի դրութիւնը բոլորովին կը փոփոխվի։ Երևի դաշնակցութիւն կը հաստատվի Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի մէջ աւստրօ-գերմանական դաշնակցութեան դէմ։ Թիւրքերը հաւատացնում են, որ Ռուսաստանը չէ սիրում Յունաստանին և թշնամի է նրա զարգացմանը։ Միևնոյն ժամանակ նրանք ասում են, որ Անգլիայի շահերի համար վնասակար կը լինէր, եթէ նա դաշնակցութիւն կապէր Ռուսաստանի հետ, բայց վախենում են, որ Ֆրանսիայի միջնորդութեամբ և փոխադարձ զիջումներով այդ դաշնակցութիւնը կարող է կայանալ։ Եթէ յոյն-թիւրքական պատերազմը կը տևի մինչև այդ դաշնակցութեան կայանալը, կամ այդ միութիւնը պատճառ առնելով, թիւրքիան թշնամական գործողութիւններ կըսկսի Ասիայի կողմից, այդ դէպքում սուլթանի մինիստրները չափազանց դժուար և մինչև անգամ անելանելի դրութեան մէջ կը լինեն։

Այս հանգամանքները ի նկատի առնելով, թիւրքիան մի որոշ վճիռ չէ կայացնում յունական խնդրի վերաբերութեամբ։ Շատ հաւանական է, որ վերջը թիւրքիան գործէ այն խորհուրդների համեմատ, որ նրան կը տայ Աւստրիան։ Իսկ այս պետութիւնը իր վերջին խօսքը միայն այն ժամանակ կը յայտնի, երբ Իտալիան կը համաձայնվի նրա կողմն անցնել։ Օրերումս իտալական դեսպան, պ. Կորտին, մի բարեկամական խօսակցութեան ժամանակ հարց առաջարկեցին իտալական կառավարութեան ապագայ քաղաքականութեան մասին։ Նրա պատասխանը հետևեալն է։

,,Շատ հաւանական է, որ եկող գարնանը Գամբետտայի ձեռքն ընկնի Ֆրանսիայի կառավարութիւնը և այն ժամանակ աւստրօ-գերմանական դաշնակցութեան դէմ անպատճառ մի դաշնակցութիւն կը կազմվի Ֆրանսիայից, Անգլիայից և Ռուսաստանից։ Ես բոլորովին չը գիտեմ, թէ իմ կառավարութիւնը ո՞ր կողմը կանգնի, բայց կարող եմ հաստատ ասել, որ Գերմանիան և Աւստրիան մեզ շատ ձեռնտու առաջարկութիւններ են անում։"

Կոմս Կորտիի խօսակիցը կարծում է այդ յայտնութեան հիման վրա, որ Իտալիան վերջը կենտրոնական պետութիւնների կողմը կանգնի, չը նայելով, որ ինքը, կոմս Կորտի, Աւստրիայի և Գերմանիայի հակառակորդ է։

Թէպէտ ամենքը սպասում են այս դաշնակցութիւնների կապվելուն, այնուամենայնիւ չեն կարծում, որ դրանք ընդհանուր եւրոպական պատերազմի պատճառ դառնան, միայն դաշնակցութիւններից մէկը ճնշում կը գործի Բ. Դրան վրա յունական, հայկական և ֆինանսական հարցերի վերաբերութեամբ։

Այս է պատճառը, որ սուլթանը թոյլ է տալիս աւստրօ-գերմանական դաշնակցութեանը առաջնակարգ դեր խաղալ Կ. Պօլսի մէջ։ Բայց յունական, հայկական և ֆինանսական խնդիրները այնպիսի պատկեր են ստացել, որ սուլթանը, երկիւղ կրելով իր անձնական կամ ամբողջ թիւրքիայի անկումից, պէտք է հրաժարվի կայ և ֆանատիկոս թշնամութենից դէպի նրանց, որոնք կամենում են ստիպել նրան իրագործել Բեռլինի դաշնագիրը: Այժմ նա վճռել է ընդդիմադրել, իր յոյսը ընդհանուր եւրօպական պատերազմի վրա դնելով, որը սուլթանին շրջապատող շէյխների, մոլլաների և իմամների նախագուշակութիւնների համեմատ, նրա պետութեանը մեծ օգուտներ կը տայ:

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները: Եթէ տասը տարի առաջ, այն ժամանակ, երբ Վերսալլ հասաւ այն սարսափելի լուրը, որ Փարիզը բոցով շրջապատված է, որ կոմունարները մինաներ են դարսել արձանների և հասարակական շինութիւնների տակ, որ նրանք սպանում են իրանց ձեռքը ընկած գերիներին, որ Սենա գետի ջուրը կարմրել է սպանված ֆրանսիացիների արիւնից, եթէ այդ ժամանակ մէկը յայտնէր օրէնսդիր ժողովի մէջ, որ նոյն մարդասպան և աւերող կոմունարները տաս տարուց յետոյ կը պահանջեն, որ կոմունային արձան դրվի, այդպիսի մարդուն կամ խելագար կը համարէին, կամ նրան կտոր կտոր կանէին Ֆրանսիայի անունը անպատուելու համար:

Տարաբաղդաբար ինչ որ առաջ չէր կարելի նախագուշակել, այժմ կատարված իրողութիւն է համարվում: Կոմունային արձան դնելու համար խնդրագիրը ոչ թէ միայն հազարաւոր ստորագրութիւններով է ծածկվում փարիզի մէջ, ոչ թէ միայն պաշտպանվում է հինգ թէ վեց ֆրանսիական լրագիրներից, այլ նա փոքր էր մնում որ ընդունվէր Փարիզի քաղաքային խորհուրդից: Յօգուտ այդ խնդրագրի 29 ձայն տրվեցաւ, իսկ նրա ընդդէմ միայն 33: Եթէ երեք ձայն վերջին կողմից առաջինին անցնէր, փարիզը հաւանութիւն կը տար մի արձանի նախագծին, որ կը յաւիտենականացնէր յիշատակը ամենաստոր աւազակների և հրդեհաձիգների, որոնց աշխարհը երբ և իցէ տեսել է:

Պէտք է ապրել փարիզի մէջ, պէտք է քայլ առ քայլ հետեւել կոմունայի յանդգնութեան սաստկանալուն, որ կարելի լինի հաւատալ, թէ այդպիսի գործեր կարող են կատարվել: Վերադարձած կոմունարների արարքները աննկարագրելի են: Ամենայն օր նրանք հասարակական և մասնաւոր ժողովներ են կազմում, որոնց ժամանակ բացարձակ քարոզվում է յեղափոխութիւն, անիշխանութիւն և աւերմունք: Աքսորանքից վերադարձած Լուիզա Միշել, այդ ժողովների ամենագեղեցիկ զարդը, յայտնում է, որ նա շուտով սրի հարուածներ կը հասցնէ Գամբետտային և հանրապետութեան միւս դաւաճաններին:

Հասարակութիւնը կատաղի հիացմունքով ծափահարում է այդ անճոռնի կնոջը, որ իմանում է մի և նոյն ժամանակ դուրեկան գործեր կատարել և չը մոռանալ իր սեփական շահերը: Նա սուր է բարձրացնում Ֆրանսիան այժմ կառավարող անձանց վրա և մի և նոյն ժամանակ խնդրում է Սենայի պրեֆեկտից, որ նրան փարիզի քաղաքային ուսումնարաններից մէկի վարժուհի նշանակէ: Յայտնի չէ թէ ի՞նչ բան պէտք է աւանդէ այդ ինքնուրոյն դաստիարակչուհին երիտասարդութեանը: Երեւի նա կը սովորեցնէ ամենաքիչ կերօսինով այրել հասարակական շատ շինութիւններ և հեշտութեամբ կոխել սուրը հաստ քաղաքացու փորի մէջ:

Ասում են, որ կառավարութիւնը մտադիր է Լուիզա Միշելին դատաստանական հալածանքի ենթարկել նրա արտասանած գրգռող ճառերի պատճառով: Հազիւ թէ կառավարութիւնը համարձակվի այդպիսի գործ կատարել, որովհետև այդ դէպքում Գամբետտան Բելվիլլի ընտրողների կողմից պատգամաւոր չի ընտրվի:

Քաղաքային խորհրդարանների անդամների ապագայ ընտրութիւնները մեծ հոգս են պատճառում կառավարութեանը: Դեռ այժմ խորհրդատու անդամները աւելի շուտ կոմունայի շահերն են պաշտպանում, քան թէ Ֆրանսիայի մայրաքաղաքի օգուտները: Այժմ քանի որ կոմունարները վերադարձած են, խորհրդատուների յատկութիւնները աւելի եւս կը վատանան: Հաւանական է, որ աքսորանքից վերադարձած կոմունարներից շատերը քաղաքային խորհրդարանի անդամներ կընտրվեն:

Այդպիսի ընտրութիւնների առաջն առնելու համար կառավարութիւնը փարիզի ընտրողական շրջանները հինգի բաժանեց, իսկ առաջ 20 էր: Նապօլէօն III-ի կառավարութիւնն էլ դիմում էր այդպիսի միջոցների, որոնց 18 տարի սրանից առաջ դատապարտում էին նոյն միջոցները այժմ գործադրող կառավարչական անձինքը:

Այս ձեւով էլ կառավարութիւնը կարող է յաղթվել, որովհետև պահպանողականները, նոյնքան ատելով հանրապետականներին որքան և կոմունարներին, կարող են ձայն տալ այս վերջինների օգտին: Եւ այս դէպքում փարիզի քաղաքային խորհրդարանի անդամները բոլորն էլ կարող են կոմունարներ ընտրվել:

Թէ պահպանողականները և թէ կոմունարները չեն կամենում ոչնչացնել այն օրէնքը, որի համեմատ ֆրանսիական դատաւորները անփոփոխ են մնում: Նրանք վախենում են, որ Գամբետտան կը լցնի դատարանները իրան հաւատարիմ մարդկերանցով և այն ժամանակ նա Ֆրանսիայի մէջ ամենազօր մարդը կը լինի:

Ֆրանսիական ամբողջ վարչութիւնը, զօրքերի մի բաժինը, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ ծառայողների մեծամասնութիւնը արդէն նրա ձեռքումն են: ,,Եթէ Գամբետտայի ձեռքը գցենք նոյնպէս և դատարանները, գրում է Ռօշֆօր, այն ժամանակ Ֆրանսիան շղթայակապ նրա ոտքերի տակ կը լինի ընկած: Նա ստիպված չի լինի կրկնել դեկտեմբերի 2-ը, որովհետև coup d'etat արդէն կատարված կը լինի: Մենք նախադասում ենք այժմեան դատարանը իր բոլոր պակասութիւններով, որովհետև սա գոնեա անկախ է: Ամենից շատ մենք վախենում ենք այն դատաւորներից, որոնք Գամբետտայի ծառաները կը լինեն:''

Եւ ճշմարիտ, Գամբետտայի թշնամիները չափազանց կը վնասվէին, եթէ դատարանն էլ նրա ձեռքը կընկնի: Դեռ այժմ մամուլի դէմ ծագած դատաստանական գործերը վերջ չունեն, միայն նոյեմբեր ամսի ընթացքում փարիզի դատարանները 80-ից աւելի մամուլի դէմ ուղղած գործեր քննեցին: Այսպիսի առատութիւն կայսրութեան ամենավատ տարիների ժամանակն էլ չէ նկատված:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Դավրէժ, 25 նոյեմ.

«Քրդական միութիւնը» իր գլուխը անխորտակելի ժայռերին կպցնելուց յետ՝ կարծես մտածում է իր քայքայմանը, զենպետ-մարշալի սուրը կարծես էլ չէ կտրում, նորա հրաշքն ի բարին չը կատարվեցաւ: Նա իր քաջ ցեղին այն մտքով կրթեց և ոգևորեց լեռներում, որ երբ իրանց ոչինչ չի սպառնայ, մի կողմից իր սուրբ օջախը և միւս կողմից իրանց բազմաթիւ անգլիաշէն հրացանները պաշտպան ունենալով և մնալ անդ ինքը Շէյխն էլ ունէր մի այնպիսի զօրութիւն, որ կարող էր թշնամու կողմից եկած անթիւ գնդակներն իր ձեռքերով յետ դարձնել: Խօրամանկ Շէյխ Ուբէյդուլլահը Թիւրքօ-ռուսական պատերազմի ժամանակ, արդէն այս տեսակ զօրութիւնը ցոյց էր տուել իր ցեղին: Մի գիշեր Շէյխը իր ձեռքերը ածուխին լաւ քսելուց յետ, առաւօտը վաղ դուրս է գալիս իր վրանից, ուր քիւրդերը սպասում էին նորան, «իմ քաջեր, ասում է նա, դուք այս գիշեր հանգիստ քնած էիք, սակայն ես ամբողջ գիշերը պատերազմել եմ գեավուրների (անհաւատների) հետ, որպէս զի իսլամը չը նուաճվի, ես նրանց թնդանօթների գնդակները՝ ահա սորանցով էի յետ դարձնում, տեսէք» ցոյց տալով իր ածուխով սևացած ձեռքերը: Շէյխը մի և նոյն տեսակ խօսքերով խաբեց քիւրդերին Պարսկաստանի արշաւանքի ժամանակ, համարելով թէ ինքը կարող է Պարսկաստանը մի ումպ ջրի պէս խմել: Բայց երբ նրանք լեռներից ցած իջան, հակառակ բաղդի հանդիպեցան. Շէյխը գալով Ուրմի քաղաքի վրա, իզուր բազմաթիւ քրդերով մի քանի անգամ պաշարեց նրան, իզուր էր հրամայում չտապել քաղաքն առնել, նորա սպառնալիքներին քաղաքից պատասխանում էր Իգբալ էդ Դովլան՝ հրացանի և թնդանօթի որոտմունքներով, մինչև որ Շէյխի բնակած այգին էլ ռմբակոծվեցաւ: Մի կողմից էլ Թէյմուր աղան մի քանի հազար պարսիկ զօրքերով վրա հասաւ և սկսեց կոտորել ու հալածել քիւրդերին, Թէհրանի զօրաբանակն էլ այդ օրերում մտեցաւ Քիւրդստանին: Շէյխը այդ դէպքերից սթափվելով, տեսաւ որ պարսկական կառավարութիւնը մի ահագին զօրութիւն է հանել իր դէմ, որի հետ դժուար է մրցել, նա տեսաւ՝ որ լեռներում իր ունեցած համբաւը և ոգևորութիւնը իրան թանգ նստեցաւ, որոնց քաղաքներում չեն համապատասխանում: Նա տեսաւ՝ որ այդ տեղ պէտք է մի ուրիշ տեսակ խելք և զօրութիւն, որ ինքը չունի և ընկել է կրակի մէջ: Այդ երեւոյթից սարսափած՝ Շէյխը հաւաքեց իր չուլն ու փալասը՝ յետ յետ գնաց դէպի Հէքեարի լեռները—իր կացարանը, որտեղից որ արշաւել էր: Շէյխը մի երկու ուրիշ դժբաղդութիւններ ևս ունեցաւ. դորանցից առաջինն է, պարսից հպատակ քիւրդերի մեծ մասի նորանից ապստամբելն և կրկին պարսից հետ միանալը, որ քրդական միութեան մեծ հարուած տուաւ, իսկ երկրորդն է քրդական թշնամի թանձր ձիւնը որ նստել է արդէն լեռների վրա:

Այժմ տեսնենք ինչ եղաւ Շէյխի որդին Սովուքբուլաղից: Երբ Շէյխ Կադըրի զօրքերը առաջանալով սպառնում էին Բինաբին, պարսից բանակի թնդանօթները անդադար գոռալով լափեցին քիւրդերից շատերին: Նրանք ետ մղվեցան մինչև Սովուքբուլաղ: Բինաբի զօրաբաժինը հետզհետէ ստուարանալով մօտենում էր յիշեալ քաղաքին, որ Սիփէհսալարը Դավրէժից գնաց դէպի Բինաբ, պարսից 3 զօրաբաժիններին հրամայելու՝ իբրև ընդհանուր սպարապետ: Շէյխ Կադըրը այս որ լսեց, մի օր յանկարծ աներևոյթ եղաւ իր ձիաւորներով. պարսիկ զօրքերը մտան Սովուքբուլաղ, պաշարումը վերացաւ, այժմ հաղորդակցութիւն կայ: Պաշարման ենթարկված քաղաքում մնացած մի քանի դավրիժեցի հայեր կային, որոնք այս օրերս եկան տեղս. Նրանցից շատ հարց ու փորձ անելով իմացայ, որ իրանք խիստ աննշան վնասներ են ունեցել. Շէյխը նրանց հետ պատւով է վարվել, այս ուղիղ է միայն, որ առնելիքի տէր հայերը մեծ կորուստ կունենան, որովհետև իրանց պարտատէր քիւրդ բէգերի գիւղերից շատերը փչացած են: Խանբաբա խան քիւրդ ազնուականը, որ մի հարուստ կալուածատէր էր, սպանուեցաւ պարսիկ զինուորներից. սա պարտական էր պ. Նազարբէգեանց եղբայրներին և ուրիշներին: Ահա թէ ինչպէս էր Շէյխ Կադըրը մտել Սովուքբուլաղ քաղաքը:

Որովհետև Շէյխը Համզ աղայից իմացել էր, որ նոյն քաղաքում ոչինչ պարսկական զօրութիւն չը կայ, այդ հանգամանքից օգուտ քաղելով իր որդի Շէյխ Կադըրին և Համզ աղային ղրկել էր քաղաքն առնելու մի միայն 400 ձիաւորներով: Ականատես հայերը պատմեցին՝ թէ Շէյխը երբ մտաւ քաղաքը, բոլոր բնակիչները նրան դիմաւորեցին, ինչպէս և հայերը. Նա քաղաքավարի կերպով էր ընդունել բոլորին: Շէյխը նըստած է եղել մի արաբական խոտերախ ձիու վրա, և նրա ետևից գալիս են եղել զանազան տեսակ քիւրդ հեծեալներ, իսկ նրա առաջին գնում է եղել մի քիւրդ դրօշակիր, տանելով հանդարտութեամբ մահմեդական կանաչ դրօշը: Շէյխ Կադըրը իր թևերը ներկած է եղել մինչև արմունկները, որպէս թէ պատրաստ է իր թևերը թաթախել չիա պարսիկների արիւնի մէջ և մի և նոյն ժամանակ պատրաստ աղօթելու համար, որովհետև մահմետականները աղօթելու ժամանակ իրանց թևերը ներկացնում են: Նա բընակվել է քաղաքից դուրս՝ իր հետ բերած մի քանի լեռնային ցանցառ վրանների տակ, մի օր միայն մտել է քաղաքի մէջ և գլխաւոր մզկիթում իր նամազը կատարել և ապա վերադարձել իր տեղը, որից մի քանի օր յետոյ տեղի է ունեցել իր փախուստը: Հակառակ այն աղմուկին, որ իբր թէ նրա հետ մօտ 10 հազար մարդիկ կային քաղաքը մտնելիս, ինչպէս տեսանք, բոլորը 400 են եղել, այն էլ խիստ անկիրթ հրացան գործածելու մէջ. օրինակ՝ երբ ձիան վրա հարկ է եղել հրացան լցնել, նրանք ձիուց վեր են եկել, հրացանը լցրել և յետոյ ձին նստել: Մի օր Սովուքբուլաղ քաղաքից թռչելով անցնում է եղել մի ահագին սագերի խումբ. Շէյխի մարդիկը ուզել են դրանցից վեր գցել հրացանով, համարեա թէ բոլորն էլ գետի եզրից մի քանի րոպէ հազարաւոր քարտուշներ փչացրել են Մարտինի հրացաններով, և հազիւ թէ կարողացել են մինը վեր գցել, այն էլ կիսամեռ՝ որ փախել է:

Պարսից զօրքերն ունեցան մի ցաւալի կորուստ, դա Վ. Եհափառ Շահի հօրեղբայր Հաշմէթըդ Դովլան էր, Թէհրանի զօրաբաժնի հրամանատարը: Ծերունի արքայազուն սպարապետը մօտ էր 70 տարեկանի, բայց փորձ պատերազմի և պարզ մարդ, որպէս մի հասարակ զինուոր. Նա շատ սիրելի էր բոլոր պարսից զինուորութեան, նորան շատ համակրում էր Շահը: Հաշմէթըդ Դովլան մի քանի անգամ եղած է Մէրվի և Հէրաթի կռիւներում. այս անգամ դեռ իր բանակով Քիւրդստանի սահմանին չը հասած, հիւանդացաւ և մեռաւ Պարսկաստանի այդ հինաւուրց հերոսը:

Շէյխի երկու որդիներն այժմ գտնվում են Թար-Գաւառում և Թէյմուր աղան նրանց առաջ կանգնած է, պարսից միւս զօրաբաժիններն էլ դէպի այն կողմն են գնում Սիփէհսալարի հրամանատարութեան տակ: Երէկ և այսօր զանազան անստոյգ լուրեր տարածվեցին մեր քաղաքում, իբր թէ քիւրդերը քաշվել էին աներևոյթ միայն՝ իրանց ուժն ամփոփելու համար, նրանք դարձեալ յարձակվել են պարսից վրա և մօտեցել Ուրմին և ոմանք էլ ասում են իբր թէ պարսիկներն են յարձակվել քիւրդերի վրա և Շէյխը նեղն ընկած հաշտութիւն է խնդրում: Լսեցինք որ Սամիհ փաշան Թիւրքաց զօրքերով գալիս է սահմանը, որ քննէ թէ այս ինչ տեսակ բան է. Ֆրանսերէն առածն ասում է «լա մութարդ ապրէ դինէ»: Լսեցինք դարձեալ որ Պարսկաստանից Շահի Զիլլի-Սուլթան որդու հրամանատարութեամբ մի մեծ բանակ ևս պէտք է կազմվի այս օրերս և ուղևորվի դէպի Ատրպատական:

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի: ,,Голосъ'' լրագրին հեռագրում են Նիկոլաեւսկից. Այսօր դեկտեմբերի 10-ին նաւահանգստի սղոցելու գործարանի շոգեկաթսան ճաքեց. երեք բանուորներ սպանված են, 9 վիրաւորված և խաշված են:

ՄՕՍԿՎԱ, 10 դեկտեմբերի: Բաժանորդների մեծամասնութիւնը վրդովված է ,,Моск. Вѣд.'' լրագրի յօդուածներից: Պատրաստում են բողոք:

ԼՕՆԴՕՆ, 11 դեկտեմբերի: Մինիստրների խորհուրդ է նշանակված դեկտեմբերի 18-ին:

ԿԵՊՏԱՈՒՆ, 11 դեկտեմբերի: Գնդապետ Բեկեր յաղթեց Պենդօսեցների ցեղի առաջնորդ Ումլօնլօին. Թշնամին կորցրեց 300 մարդ սպանվածներով: Շատ անասուններ աւար են առնված: Ումլօնլօ փախաւ: Անգլիացիները կորցրին 1 օֆիցեր և 13 զինուոր սպանվածներ և 10 վիրաւորվածներ:

ԱԹԷՆՔ, 1 դեկտեմբերի: Կումունդուրոս մի շրջաբերական ուղարկեց Յունաստանի ներկայացուցիչներին մեծ պետութիւնների մօտ, որով նրանց առաջարկում է մերժել միջնորդ դատարանի առաջարկութիւնը:

ԴՈՒՐԲԱՆ, 11 դեկտեմբերի: Լուր է տարածված, որ Տրանսվալի բօէրները յաղթեցին անգլիացիներին Մեդդելբուրգի մօտ: Ասում են, որ անգլիացիներից 200 մարդ սպանված են և 50 գերի ընկած:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ